

րում ևս կան հայեր (Ամպնան, Մոճուկրատ, Սուլ, Տուլունգանգու և այլն) իւրաքանչիւր տեղում 1—4 հոգի:

Ընդհանուր առմամբ նիւթապէս միջակ վիճակի մէջ են: Գաղթականութեան սկզբնական շրջանում Ջաւայեան կղզիներէ առևտուրը գլխաւորաբար հայերի ձեռքն է եղել, սակայն հետըզհետէ անցել է եւրոպացոց ձեռքը. և սպասելի էր, քանի որ եւրոպացիք ընդհանրապէս մեծ դրամագլխի հետ միացնում են աւելի մեծ վաճառականական պատրաստութիւն և նախաձեռնող ոգի:

Ջաւայեան կղզիների վրայ բնակուող համարեա բոլոր հայերը (շատ քիչ բացառութեամբ) խօսում են հայերէն, քանի որ մեծամասնութիւնը գնացել է Նոր-Ջուղայից, և երբեմն ևս օգնում են Ջուղայի ազգային հաստատութիւններին նիւթապէս: Հասկանալի է, որ այս փոքրիկ գաղութը չունի ապագայ, եթէ մինչև այժմ էլ մնացել է Ջուղայում հայութիւն, նախ շնորհիւ նախնիքների հիմնած ազգային հաստատութիւնների և երկրորդ շնորհիւ շարունակ Ջուղայից գնացողների: Տեղում ծնուողներն ու կրթուողները մեծ մասամբ արդէն խորթացած օտարացած են (բացառութիւններ քիչ կան), չգիտեն իրանց մայրենի լեզուն, չեն հետաքրքրուում ոչ մի ազգային գործով:

### ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Русское Богатство“, № 3.—Ռուս-ճապոնական ընդհարումը առիթ է տուել ռուս օտարակեր հրապարակախօսներից մէկին՝ Մենշիկովին „Нов. Вр.“-ի միջոցով տարածել այն հրէշաւոր միտքը, թէ ներկայ պատերազմն արդիւնք է հրէական ազիտացիայի այն երկրներում, ուր մամուլը և բիրժան նրանց ձեռքումն է: Արիւնով ստիպիներ՝ ասում է Մենշիկով, դուրս եկած մերձաւոր արևելքից՝ հրէաները առաջին հարուածը տալիս են հէնց Ասիայից—Հեռուոր Արևելքից: Հարելք տարի է, որ մենք յետաձգում ենք հրէական հարցը և առ ներքին ախաբ դուրս է տալիս այժմ շարանշան կերպարանը: Ռուսաստանից խոյս տուածները

մեր դէմ կօալիցիա են կազմակերպում, մեր թշնամիներին փոխատուութիւններ են դանում և ճապոնական կայսրին զբահաւոր են մատուցանում ընծայ:

«Рус. Богат» իր № 3-ում խօսք չի դանում նշաւակելու անմտութեամբ հրէշաւոր այս մեղադրանքը:

«Վերջին ժամանակ շատ բանի սովորեց մեր զբականութիւնը, սուս է յիշեալ ամսագիրը. բայց նա քիչ անգամ էր տեսել անմիա շողակբառութեան և թունտ շարութեան այնպիսի զուգակցութիւն, որպիսին կարողացաւ ստեղծել պ. Մենշիկով յիշեալ տողերով:

«Պ. Մենշիկովը հասակ առած մարդ է և ցանկանում է խօսել նոյնպիսի

մարդկանց հետ, բայց և այնպէս նա հնարաւոր է գտնում հաւատացնել իր խօսակէցներին, որ Անգլիան և Ամերիկան ենթարկուած են հրէաներին և իրազօրծում են նրանց ցանկութիւնները միջազգային բազաբանութեան մէջ:

Ռուսաստանի դէմ ոչ մի կօալիցիայի մասին տակաւին խօսք չկայ, բայց պ. Մենշիկով արգէն յայտարարում է, թէ մեր երկրից դուրս դնանացած հրէաները (որոնք, Վայտչեպելեան դերձիկները, թէ՛ նիւ-ձորկի արհեստաւորները) մեր դէմ կօալիցիա են պատրաստում: Ճապոնեան դեռ ևս փոխառութիւն չի կնքել, բայց պ. Մենշիկով արգէն շատուում է հռչակել, որ նոյն հրէաները մեր «երկրից» մեր թշնամիներին փոխառութիւն են պատրաստում»: Լքագրերը սպրդեցին մի անհիթիթութիւն այն պահաւորի մասին, որ իւր թէ մի քանի ամերիկացիներ մտադիր են զննի Ճապոնիային ընծայելու համար, և ահա Մենշիկով և այս արտոգրը փաթաթում է հրէաների վրին՝ միտցնելով իր հաւաքած յիմարութիւններէ կոյտին:

Չեանքի սովորական պայմաններում ստութեան այսպիսի կոյտին ողջմիտ մարդիկ նայում են և շտապում անցնել: Բայց դժբախտաբար լինում են և այնպիսի պայմաններ ժամանակի և տարածութեան մէջ, երբ նոյնիսկ այս աստիճան ստայօզ ցընորքները կարողանում են ստանալ որոշ նշանակութիւն: Ահա թէ ինչու Մենշիկովի աղշնցուցիչ գիտերը չի կարելի թողնել առանց ուշադրութեան: Առաջինը պ. Ամֆիտէատրովը դրանց վրայ ուշք դարձրեց: «Русь»-ի մէջ տեղաւորած բուն վրդովմունքով լի յօդուածով նա ցոյց տուց, որ հրէաների գլխին բարգելով ռուս-ճապոնական պատերազմի մեղքը՝ Մենշիկով հրապարակ է նետում մի անմիտ ու կեղառտ բամբաստանք, որ մի նպատակ միայն կարող է ունենալ—գրգռել և առաջ բերել հրէական նոր քարգեր: Այսպիսի մի բամբաստանք էլ անկի զդուս-

լի է դառնում, բանի որ նա ասարածուած է հէնց այն ժամանակ, երբ տանակ հազար հրէայ զինուորներ ռուս դրօշակի տակ կանգնած՝ պատրաստուած են իրանց արիւնը թափել ռուս ընկերներէ հետ:

Երբ գրողին մնում է քննադատութեան մի հատիկ միջոց—բամբասանքը, մի հատիկ զէնք վիճարանութեան—գրպարտութիւն, նա դադարում է զբող լինելուց և անցնում է այն մարդկանց բանակը, որոնց գրադմունքը միմիայն խիւրիմացութեամբ կարող է գրականութեան հետ խառնուել: Մենշիկովը վճռականապէս անցաւ այդ օրհասական շեմքը, և որքան էլ տգեղ լինի այդ տեսարանը ինքնրատիւրեան, նրանում կայ զոնէ այն միթաբիւշ կողմը, որ այսպիսով վերջ են առնում բոլոր թիւրիմացութիւնները:

«LA REVUE» հանդիսի մարտ-15-ի համարում մի հետաքրքիր բանակուի կայ ցեղերի զերազանցութեան հարցի մասին: Բանակուողներն են մի կողմից Զարյ Ռիշե՝ Պարբիբ բժշկական ֆակուլտէի յայտնի պրոֆեսորը, որ նախագահ է «Société d'arbitrage entre nations»-ի—Ազգերի միջև իրաւաբարական ընկերակցութեան—հետեւորար համաշխարհային խաղաղութեան և եղբայրակցութեան դատի պաշտպաններէ մինը, իսկ միւս կողմից La Revue հանդիսի տնօրէն-խմբագր-բապետ Ժան Ֆիկեօ:

Վէճի տեղի է տուել ռուս-ճապոնական պատերազմը: Բայց երկու հակաճառողներն էլ լինելով գիտութեան մարդ, բնականաբար բանակուիւր գուրկ է արէ՛ քաղաքական նրկարագրից և դառնում է սկզբունքի և զաղափարների շուրջը:

Ռիշէ պնդում է այն սովորաբար տարածուած մտքի մասին, թէ կան ցեղեր, որոնք տակի օժտուած են, քան թէ միաները: Օրինակ՝ «այլիտակ» ցեղը անվիճելիօրէն բարձր է «գեղին» և «սեւ» ցեղերից: «Յառավարութեան, լեղուի, բարքերի, կրօնքի, ինչպէս և

սահմանադրւի տարբերութիւնները մահերևութային են, ասում է Ռիշէ, և մարդկային էակը մնում է դարձեալ միևնույնը: Մեծացրէք մի ֆրանսիացի երիտաչ չուսում և մի սերիչը հզինուրուզում, դժուար թէ կարողանաք առաջինը դանադանել իտալացիներէց և երկրորդը սկովոնացիներէց: Սակայն ինչ վերաբերում է ցեղի տարբերութեան, այդ բոլորովին ջոկ բան է: Մեծացրէք մի ճապոնացի երիտաչ չուսում, Լոնդոնում, Մազբիտում կամ Բերլինում, նա կը մնայ միշտ ճապոնացի, այսինքն դեղին ցեղից: Ուրիմն սպիտակ և դեղին ցեղերի մէջտեղ կայ մի անուրանալի տարբերութիւն. և քանի որ կայ տարբերութիւն, պէտք է նրանք իմացականութեամբ կամ հաւատար լինեն և կամ մէկը միւսից բարձր: Ազգ, ինձ թւում է, որ այդ մասին կասկած անգամ չի կարող լինել—սպիտակ ցեղի գերազանցութիւնը մի արհրբքից, բացարձակ ճշմարտութիւն է: Թէ այդ գերազանցութիւնը իրատւոյք է տալիս ըստպիտակներին լինել նենգաւոր, ստախոս, կողոպտիչ, անզուխ, բարբարոս—այդ տեսակ մի կարծիք ինձ վերագրելը պարզապէս վիրատրական է: Ես պնդում եմ միայն, որ սպիտակները դեղիններից բարձր են, և կը փորձեմ ապացուցանել: Ապա Ռիշէ՝ ներկայացրենելով ամբողջ արևմտեան քաղաքակրթութիւնը որպէս արգիւնք բացառապէս սպիտակ ցեղի հանճարի՝ շարունակում է.

«Վուլտոլրական և քաղաքական այս անհուն յաղթանակների փոխարէն ի՞նչ ունեն դեղինները— ոչինչ կամ գրեթէ ոչինչ, շարունակում է Ռիշէ: Մեր կարծիքի քաջութիւնն ունենանք և անկեղծօրէն խոստովանենք այն, ինչ որ մտածում ենք գաղանապէս— ճապոնացիները ճարպիկ նմանողներ են. ահա թէ ինչ է նրանց ձիբբը:

Հետևողութիւնը:

Այդ մարդիկը մեզ նման մարդիկ են. նրանք մեր եղբայրներն են, իրաւ, բայց մեր ստորին եղբայրները. այս էլ

չի կարելի կասկածի տակ դնել: Այժմ ի՞նչ պէտք է լինի իմ եզրակցութիւնը: Չատ պարզ է այն և կարող է ամփոփուել մի բառի մէջ—արդարուրիւն: Երբ հարցը մի մարդկային էակի մասին է, թող նա լինի մեր հաւատար կամ մեղանից ցածր, մենք ստիպողական պարտականութիւնն ունինք նրա նկատմամբ լինել արգար: Մի խափշկի կամ մի սպիտակի նկատմամբ դրժել այդ պարտականութեան—ոճրագործութիւն է: Ես նոյնիսկ կը պնդեմ, թէ քանի որ մենք դեղիններից բարձր ենք, պէտք է մեր գերազանցութեան ապացոյցը տանք մի աւելի բարձր բարոյականութեամբ: Չտո յաճախ եւրոպացի զինուորներ իրանք իրանց թղթ են տալիս ոճրագործների նման վարուել ընդհանրի հետ: Ո՛չ, հազար անգամ սօ՛ւ մի բարձրագոյն ցեղի պատկանելը ոչ մի իրաւունք չի տալիս անիրաւութիւն գործելու:

Ու պրոֆ. Ռիշէ վերջացնում է հետևեալ կերպով.

«Պէտք է մտահոգութիւնից շնուացրեն ժողովութեան ապագայի հարցը: Եթէ պատմութեան մէջ երևան գար այն անխմտ, անհաւատալի փաստը—սպիտակ ցեղի ջնջումը կամ տիրապետութիւնը դեղին ցեղի կողմից—գա նոյնքան մեծ կատակիւզմ, աշխարհաքանդութիւն կը լինէր, որքան եթէ մեր երկրազնդի վրայ իշխէր օղևերայթաբանական (météorique) ամենաստորսափելի երևոյթը, որովհետև մարդկային ապագայ բախտը կը վտանգուէր: Մեհեանները, պագոտները, կարիկատուները և միավանկ լեզուները մեր արիական շրեղ քաղաքակրթութիւնը կը փոխարինէին, ու այդ կը լինէր մի վերադարձ դէպի անասնականութիւնը:»

Ժան Ֆինո տաղանդաւոր իմբազրագետը հաստատելով, որ Revue-ն միշտ արդարութեան դատն է պաշտպանել ամեն ժամանակ, երբ աւելի է ներկայացել, ինչպէս օրինակ՝ հայերի դատը «Վարմիր Սուլթանի» դէմ, կուրացիների դատը սպանիացիների դէմ,

Ֆիլիպպիններէ դատը ամերիկացիներէ դէմ, բռնութիւններէ դատը անգլիացիներէ դէմ կային կային—դարձեալ հրապարակ է ինչուս խօսելու նոյն արդարութեան անունով ի նպաստ դիրներէ:

«Երբ մեզ հաւատում են, զբում է ծան ֆինո, որ ցեղերի անյաղթելի ճակատագրականութիւններ կան, պարզապէս ուրանում են առաջադիմութեան օրէնքը: Հաստատել՝ թէ մարդկութեան մի մեծ մասը դատապարտուած է բնախօտական (ֆիզիօլոգիական), մտաւորական և բարոյական անշարժութեան, պնդել է, թէ 1) զիտութիւնն ու ժամանակը անկարող են մեր մարմնի և մեր մտքի մէջ կատարելու տարբերական փոփոխութիւններ: 2) Միշտդեռ մենք հռչակում ենք էվոլյուցիայի յաղթանակը կազմակերպուած էակներին ստեղծագործութեան և կազմութեան սահմանում, նոյն էվոլյուցիան շարժար է կարողանար մի պարզ փոփոխութիւն առջ բերել մարդկանց՝ իրարից զանազան՝ ստորադաս յատկութիւններէ մէջ: Այսինքն թէ հակասութիւն կը լինէր հաստատել, որ էվոլյուցիան կարող է այնպիսի մի մեծ դեր կատարել, որպիսին է մարդկային էակների ստեղծագործութիւնն ու կազմակերպութիւնը, և նոյն այդ էվոլյուցիան անկարող է աւելի չնչին փոփոխութիւններ առաջ բերել մարդկանց այլևայլ յատկութիւնների մէջ:

Եւ յետոյ ինչք մէջ են կայանում այդ տարբերութիւնները: Մեզ ասում են՝ Ֆիզիօլոգիական, իմացական և բարոյական շրջանում: Այդ տարբերութիւնները փոփոխուում և բարեշրջում են մեջավայրը կազմող բերանը պատճառների փոփոխման ազդեցութեան տակ: Սկսենք նախ զոյնից, որը սպիտակների ձեռքին զլխուտը գէնք է ծառայում: Են ծան-ֆինո մի շարք վերին աստիճանի հետաքրքրական փաստերով գալիս է այն ուշադրաւ եզրակացութեան, որ փոխելով կլիման՝ դեղնամորթներն ու սևամորթները կորցնում են իրանց

զայնի ուժգնութիւնը մի քանի սերընդից յետոյ:

«Մեր աչքի առջ է, շարունակուած Թ. Ֆինո, որ կատարուում է ստեղծումը «ամերիկեան» այն ցեղին, որ Միացեալ-Նահանգների միջավայրի ազդեցութեան տակ հիմնովին կերպարանափոխուում է: Ժամանակակից ամերիկացին մօտենում է Ամերիկայի բնիկներին և աչքի է ընկնում այն բնորոշ դժով, որ նրա գէմքի ստորին մասը համարեա ջրաանկիւնի է հակառակ անգլիացիների ձուածն զմտազօմութեան: Պրուներների կարծիքով՝ եանկին 2-րդ սերնդից յետոյ մօտենում է կարմրամորթներին և սկսում է լինել լինեալ, իրոհուա կամ շերտի վայրենի ժողովուրդների զիմազծութեան նշանները ցոյց տալ: Այդ փոփոխութիւնները ժամանակի ընթացքում այնքան պիտի շնչուուն, որ Կարպանտերի կարծիքով՝ պիտի զայ մի օր, որ ամերիկացին ինքն իրան թողնուիով՝ պիտի փոխուի կարմրամորթի...»

Բայց անցնենք այն հռչակաւոր «զլխային նշան»-ին (indice oirhalique), որին պարտական ենք մանաւանդ մարդկանց երկու մասն՝ աւերիկ և պարեանների դժբախտ բաժանումը:

Ներկայ մարդարանները՝ հակառակ Արիստոտելի տեսութեան, վճռում են ի նպաստ մեծ զլուխների, որոնց նկատում են ուժեղ զլուխներ: Գլխի կազմութեան ձևը—նայելով թէ dolicho կամ brachycephalique է—ցեղի բարոյական և իմացական արժէքն է որոշում: Գոնդերի ձեական՝ մորֆօլոգիկ տարբերութիւնները մարդկանց մէջ ստեղծում են մի մեծ վնս: Ընորհիւ այս զոգորթիկ տեսութեան է, որ լայն և նեղ դանդ ունեցող մարդկանց մէջ բաց արին մի հակա-սոցիալական կախ և քարոզեցին տեսութիւն սչ միայն այլևայլ որոշ ցեղերի և ժողովուրդների միջև, այլև միևնոյն երկրի բնակիչների միջև:

Պ. Ֆինո զանգարանական այդ տեսութեան համեմատ մի շարք փաստեր յիշատակելով, որոնք՝ տեղի սղու-

Թեան պատճառով՝ չենք կարող առաջ բերել, հասնում է հետեւեալ եզրակացութեան.

«Ինչ հետեւութիւն կարելի է հանել այդ փաստերից - Թէ զանգաբանական այդ բոլոր դիտողութիւնները մեզ սչինչ չեն սովորեցնում ժողովուրդների իմացական կարողութեան և բարոյական հակումների մասին: Եթէ մենք գանդաշափական այդ բոլոր քմայքներին. ֆանտազիաներին իրական արժէք վերագրենք, ցեղերի հաւասարութեան տեսակէտով ամենատարօրինակ հետեւեցնենքի տիտի յանգինք: Պէտք էր այն ժամանակ զլիսալին նշանի ցուցմունքի համեմատ միևնոյն մակարդակի վրայ դնէինք ըռշիմաններին և Ռուսիայի նի ֆրանսիացիներին, տելուզներին և հիւսիսի ֆրանսիացիներին, Բրազիլիայի նահականերին և Լիմուզնի ու Պատիկորի ֆրանսիացիներին և ընդհանրապէս մտղուաներին ու այլ վտտակներին ֆրանսիացիների, եւրոպական քաղաքակրթութեան և բարոյականի ամենատարտայայտիչ տիպի հետ»: Պ. Ֆինո անցնում է մի ուրիշ տեսութեան, այն, որ պնդում է, թէ ուղիղ ծանրութիւնը համադատասխանում է իմացականութեան աստիճանին. այս տեսութեան հակառակ էլ նա առաջ է բերում անհերքելի փաստեր, որոնք ժխտում են ուղիղի համեմատական մեծութեան արժէքը մտաւոր ընդունակութիւնների տեսակէտից:

«Բարոյական և խնացական տարբերութիւնները նուազ խնդրի առարկայ են և պահանջում են միայն մի համառօտ պատասխան: Մեր մտայնունութիւնը (mentality) կազմում է մտնականը շնորհիւ այն ազդիւրների, որ նրան սնուցանում են: Ճապոնացիները արևմուտքի քաղաքակրթութեան նորեկներ, տիրացել են արդէն այդ քաղաքակրթութեան բոլոր մոլութիւններն և բոլոր առարկիւնութիւնները: Նրանք համարեա եւրոպացիներ են իրանց պատերազմաէք կրքերով, օտարականի դէմ ասելութեամբ, դրամապիւրութեամբ և նացիոնալիստական

վայրագ բնագրներով: Մինչդեռ չինացիները պատերազմի և պրոֆեսիոնալ զինուորականների համար խոր արհամարհանք են տածում, ճապոնացիները՝ եւրոպայի և մանաւանդ իրանց անմիջական ուսուցիչների, գերմանացիների այդ խելացի աշակերտները անասնական ուժի հանդէպ նոյնքան յարգալից են դարձել, որքան գերմանացիները... Ինչով ենք մենք նրանցից բարձր... կրօնքի մասին նրանք վարում են համարեա գայթակղեցուցիչ ներդրամբարութեամբ, որպէս թէ երկրի սղգաբնակութիւնն Սպինսերի նման փիլիսոփաներից և Բերթելլօի նման գիտուններից կազմուած լինէր. նրանք առանձնաշնորհեալ դասակարգեր համարեա թէ չունեն: Բայց համբարութիւն: Արդէն մի ֆինանսական ֆէոդալիտեա, կապիտալիստ կազմակերպութեան այդ վտտ արտադրութիւնը հետզհէտէ կազմուելու վրայ է... նրանց գիտական և իմացական առաջադիմութիւնները պաշնուցիչ են, որովհետև ամեն տարի այնտղ լոյս տեսնող հատորների թիւը՝ ճապոնեան աշխատող և ուսանող երկրների առջին շարքում է դետեղում: Ամեն նազամ, երբ նրանութիւն են կրում նրա գեղարուեստներից մինը ուսումնասիրելու. գմայլուած են մնում նրանց անակնկալ հանճարի առաջ: Էդ. դը Գոնկուր, որ ամբողջ տառը տարի ուսումնասիրել է Հոկուպայիին, այն նկարիչը, որ իր դարձերը «գծադրութեան գծուած սերահար» ստորագրեց, մեզ ներկայացրում է Հոկուպայիին իրրև մի տիեզերական հանճար, աշխարհի ամենախնքնատիպներից մինը»...

Ու պ. Փան Ֆինո վերջացնում է իր յօդուածը հետեւեալ խօսքերով.

«... Թողնենք նոյնիսկ, որ մեր համարութիւնները անլուրուս լաւ կամ վատ ըմբռնուած շահերի անունով, բայց զգուշանանք այդ շահերի համար դոհել մարդկանց հաւասարութեան նուիրական և էական սղգրունքը, հակառակ նրանց գանդի ձեւին, մորթի կամ բնութեան ուժերը աստուածացը-

նելու եղանակին: Ջնջելով կամ տկարացնելով այդ սկզբունքը՝ լայնօրէն բաց ենք անում դուռը բոլոր անարգարութիւններին առաջ»...

**Հանդէս Ամսօրեայ.** Մարտի համարում կարգում ենք հետեւեալ տողերը հայկական աստուածաբանական մասին.—Մեզի՛ աւելի իւր «Էջմիածնի Աետարանով» \*) ծանօթ պրոֆ. Սաշըզովսկի մեր մամլէն լոյս աշխարհ հանեց ուշագրաւ գործ մը՝ որ Հայոցս ճարտարապետական արուեստին համար արտաքոյ կարգի մեծ նշանակութիւն ունի\*\*): Գրուածքը արուեստագիտական բողոք մըն է ընդդէմ այն՝ իւր հնութեամբն և ճարտարապետական յօրինուածով կարի նշանաւոր—մասնաւոր գերմանացոց համար—Աախէնի մայր եկեղեցին նորոգողներուն, որոնք յիշեալ եկեղեցոյն ճարտարապետական ոճը՝ նորոգութեան միջոցին, փոխանակ անխախտ պահելու ազիտութեամբ կ'եղծանեն ու կը փճացնեն:—Պրոֆ. Սաշըզովսկի նորոգիչներուն աչաց միտարքն ի բաց պարզելով՝ մատնանիշ կ'ընէ Աախէնի մայր-եկեղեցոյն ճարտարապետական ոճին ուսկից յառջ գալը, որ սչ թէ բելգիական հռոմէականն է, ինչպէս մինչև հիմայ առհասարակ կը կարծուէր, այլ արեւելքէն, Փոքր Ասիայէն—Հայաստանէն: *Germigny-des-Prés*, Աախէնի *Dom*-ը և ընդհանրապէս կարողնդեան ոճով շինուած եկեղեցեաց յատկագիծը, ճարտարապետական շինուածքն և յօրինուածութիւնը՝ Հայաստանի հին եկեղեցեաց և մասնաւոր չ. Գտտանի

\*) *Byzantinische Denkmäler I: Das Etschmiatsin-Evangeliar. Beiträge zur armenischen, ravenntatischen und syro-ägyptischen Kunst. Wien, 1891. Հայ թրգմ. չ. Պիլէզիկեան, Վիեն. տպ. Միլիթ. 1892:*

\*\*) *Der Dom zu Aachen und seine Entstehung. Ein kunstwissenschaftlicher Protest von J. Strzygowski, Wien, 1904.*

Նանիւր պեղելով դուրս հանուած ս. Գրիգորի եկեղեցոյն յատկազօծին հետ զրեթէ բոլորովն նոյն է \*): Սաշըզովսկի կ'ըսէ, այս հայկական եկեղեցոյն՝ իւր տեսակին մէջ մի միակ շինուածը ամենամեծ մտազբուժեան արժանի է: Ս. Գրիգորի եկեղեցին արեւելքի և միանգամայն արևմուտքի քրիստոնէական արուեստի պատմութեան համար արտաքոյ կարգի նշանակութիւն ունի. 650 թուականը որոշ է, որով մեր աշը կը բացուի այնպիսի ժամանակի մը ձևերուն հարստութեան վրայ, զոր մենք կարճ ու կարուկ «Բիզանդեան» ըսելով կը լմնցրիննք: Սակայն այս էջմիածնի քով եղած շէնքը դժուարին է անձուկ մտքով «Բիզանդեան» անուանել, վասն զի Գ. Պոլսէն կախում չունի: Մանուսանդ թէ այն «հատեան» անկեան յատուկ արտազբուժիւնն է, զոր Սաշըզովսկի կը յայտարարէ այն գլխաւոր գեանիններէն կամ աղբիւրներէն մէկը, ուսկից քրիստոնէական արուեստին ձևերը կը բխեն: Փ. Տէր-Մովսէսեան իւր «Հայ գիւղական տուն» գործին մէջ հին Հայոց տան հին արեւելքի հետ ունեցած կապակցութիւնը կը ցուցնէ, ինչ եկեղեցիներուն նկատմամբ անկի միտեալ է բոլորովն յունական ազդեցութիւնն ընդունելու, սակայն պէտք է միտ դնել թէ այն յունական ազդեցութիւնը Գապազովկիայէն էր, և պրոֆ. Սաշըզովսկիի «*Kleinasiens*» մատենին մէջ կարդալ թէ այն ինչ յունականութիւն է. զեղարուեստի նկատմամբ ըստ ինքեան ոչինչ, որովհետև Գապազովկիոյ յիշատակարանները պարզապէս արեւելեան են: Հայաստանի և Բիզանդիոնի մէջ՝ ճարտարապետութեան նրկատմամբ եղած աղբան անկի արեւելքէն արևմուտք եղած գաղթականութիւն է քան թէ հակառակը: Սրբալմամբ կամ դիտմամբ «հայ» յորջոր-

\*) Ս. Գրիգորի եկեղեցոյ վրայ մասնագիտօրէն զրբը է մագիստրոս Տէր-Մովսէսեան (ուսերէն) Կայսերական Հնագիտ. Հնդ., VII., 1903:

Ջուած Վասիլ Առաջնով (867—887) կը սկսի ուղղութիւն մը, որուն հետքերը գեղարուեստից բողոմաթիւ ճիւղերուն մէջ կ'երևան. այն աստիճաններ և անկէ շատ յառաջ կը տեսնենք որ Հայք քաղաքակրթութեամբ ամէնէն երևելի տեղեր կը գաղթին, մանաւանդ երուսաղէմ և Եգիպտոս՝ ուր յիշատակարաններն ալ անպակաս չեն, և այս տեղերէն ալ ելլողաւ: Ատիէնի մայր-եկեղեցւոյն և ի մասնաւորի *Geraniogy des-Prés* (Օրլէանի քով) ժամին շինածքն իւր ճակատին վրայ կը կրէ իսկական արևելեան կնիքը. այնպէս որ «մանրամասն տեղեկութիւն շունեցողները զույգ ժպտին, կը զրուցէ պրոֆ. Սաշըլովսկի, եթէ ըսեմ որ

անկարելի բան չէ թէ յիշեալ եկեղեցւոյ շինութեան մէջ հայ մը մասնակից եղած ըլլայ».— Հայկական ճարտարապետութեան ուսումը դեռ որրոցի մէջ է, ինչ կ'ըսենք, տակաւին խանձարոյ մէջ ալ չէ: Ցեսած ենք հայ ճարտարապետներ՝ որոնք՝ երբ մեզմէ լսած են թէ հայկական բուսած ճարտարապետական ոճ մըն ալ կայ՝ արհամարհական քմծիծաղով մը խոռած են... Չառ իրաւացի է պրոֆ. Սաշըլովսկիի բռածը թէ— Դուք՝ Հայերը չէք գիտեր թէ ինչեր ունիք. հայկական արուեստը մասամբ իւրի մարտարապետութեան զարգացման մէջ առաջնորդի դեր ունեցած է:

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Բազուից, երգուեալ հաւատարմատար Ս. Ս. Յարութիւնեան նուիրում է 1904 թ. ընթացքում միմի օրինակ «Մուրճ»—1) Վերին Աղղանի գիւղական դպրոցին. 2) Քարվանսարայի գիւղական վարչութեան. 3) Դիլիջանի գիւղական վարչութեան. 4) Ղարադաշի գիւղական վարչութեան. 5) Մեծ-Ղարաքիլիսայի գիւղական վարչութեան:

Բազուից, երգուեալ հաւատարմատար Յ. Յ. Սաղաթելեան նուիրում է 1904 թ. ընթացքում միմի օրինակ «Մուրճ»—1) Ալիբուչակի հասարակութեան. 2) Բաշ-Աբարանի գիւղական վարչութեան. 3) Մողնու ս. Գէորգ վանքին. 4) Մակուի ս. Թադէոս Առաքեալի վանքին. 5) Աշտարակ, Ղարաքիլիսայի գիւղական վարչութեան:

Յիշեալ հասցէներով արդէն ուղարկուած են լոյս տեսած համարները: Խմբագրութիւնս խնդրում է ուղարկած համարները չստանալու դէպքում իսկոյն յայտ-